

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ

31.08.2015



Միքելի աշակերտներ, հարգելի մանկավարժներ և ծնողներ:

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ: Նոր ուսումնական տարվա մեկնարկը մեզանում միշտ էլ եղել է սպասված, հաճելի պահերով ու տոնական տրամադրությամբ առկեցուն, քանզի այն ծնողների համար նորացված սպասումներին, նվիրական երազանքներին ու նպատակներին հասնելու մի նոր տարեշրջան է հանդիսանում, աշակերտների համար՝ նոր ձեռքբերումների ճանապարհին գիտելիքների հարստացման անկրկնելի հնարավորություն: Իսկ դպրության, գիր-գրականության և որակյալ կրթության հանդեպ սերը մեր ժողովրդի մեջ գալիս է դարերից և փոխանցվում է սերնդե-սերունդ: Յուրաքանչյուր մեկնարկող ուսումնական տարին մի նոր հնարավորություն է՝ մեր ոսկեդենիկ այբուբենը յուրացնելու, խորը ու կայուն գիտելիքներ ձեռք բերելու, կարողություններն ու իմացությունը բազմապատկելու համար, որոնց շնորհիվ կարելի կլինի օժանդակել մեր մարզի տնտեսական զարգացմանն ու մեր օջախների շենացմանը:

Միքելի դպրոցականներ, ես հավատում եմ, որ ձեր գիտելիքներն ապագայում ի նպաստ եք բերելու ձեր դպրոցի, ձեր համայնքի, մեր մարզի զորացման ու հզորացման գործընթացին:

Հարգելի մանկավարժներ, բարձր գնահատելով ձեր ներդրումը մարզի կրթական համակարգի զարգացման գործում՝ համոզված եմ, որ ձեր սաների հոգում վեհ ու համամարդկային գաղափարներ սերմանելու համար արել եք և այսուհետ անելու եք ամեն հնարավորը, որպես կրթության ու դաստիարակության գործի նվիրյալներ:

Ի պատասխան Ձեր նվիրական աշխատանքի, հավաստիացնում եմ, որ մարզային իշխանություններն ամեն ինչ անելու են ձեզ համար աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և ուսումնական տարվա խաղաղ ու ռիթմիկ ընթացքն ապահովելու համար:

Միքելիներս, ամենայն սիրով, ու ամենաջերմ բարեմաղթանքներով ուզում եմ շնորհավորել առաջին դասարանցիներին: Թող գիտելիքի տաճար նրանց մուտքը բարեբեր լինի: Բարի երթ եմ մաղթում նրանց գիտության բարձունքներ տանող լուսավոր այդ ճանապարհին:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս նոր ուսումնական տարվա մեկնարկի, Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ, քանզի այս տոնն իր բովանդակությամբ տոնական տրամադրություն է բերում բոլորիս ընտանիքներին, թակում է յուրաքանչյուրիս դուռը և հյուրընկալվում առանձնահատուկ սիրով:

Բարի երթ նոր ուսումնական տարում: